ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-446-29.11.2022-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի՝» խմբագրությամբ: Իսկ 3-րդ և 5-րդ պարբերություններից հանել «նույն հոդվածի» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0)	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է

		Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված			
3.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ժե) **Դոպինգի օգտագործում՝** Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոնների մեկ կամ մի քանի խախտումների դեպքեր»:	Չի ընդունվել, քանի որ Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով հստակ ամրագրված է՝ «Դոպինգը սահմանվում է որպես հակադոպինգային կանոնների մեկ կամ մի քանի կանոնների խախտումներ»: Իսկ օգտագործել դոպինգ նշանակում է խախտել հակադոպինգային օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոններից մեկը կամ մի քանիսը, բայց ոչ նախատեսված բոլոր կանոնները: (Օր. Նմուշառումից խուսափելը, հրաժարվելը կամ նմուշառման	Չի ընդունվել

				վայր չներկայանալը դա դոպինգ կանոնների խախտում է, բայց ոչ երբեք դոպինգի օգտագործում)	
4.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	6-րդ պարբերությամբ կատարվող փոփոխությունը ընդունելի չէ: «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասի» օրենքի (այսուհետ՝ Օրենք) ներկայիս կարգավորումը ավելի նպատակահարմար է, քանի որ Համաշխարհային հակադոպինգային գործակալության օրենսգրքից է բխում Հակադոպինգային գործակալության պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության դրույթները: Միաժամանակ, իրավական որոշակիության սկզբունքի պահանջները հաշվի առնելով, պարզաբանված չեն, թե Նախագծում ինչ են ենթադրում թեստերի բաշխման պլանավորումը, գրանցված թեստավորման լողավազանի պահպանումը, այլ գործողությունների կատարումը և այլն:	Ընդունվել է մասամբ: Հակադոպինգային գործունեության սահմանումը խմբագրվել է, որն ամողջությամբ համապատասխանում է Հակադոպինգային գործակալության ներկայիս գործունեությանը:	Ընդունվել է մասամբ
5.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-	Առաջարկվում է չհամարակալված պարբերություններում և մյուս հոդվածներում «հետևյալ բովանդակությամբ» բառերը առաջարկում ենք փոխարինել «հետևյալ խմբագրությամբ»	Ընդունվել է	Ընդունվել է

		29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	բառերով:		
6.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագիծը խմբագրել՝ համաձայն առաջարկությունների 1-ին կետի՝ չկրկնելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ամբողջական անվանումը:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին և 5-րդ հոդվածներ	Առաջարկվում է հոդվածներում առկա չհամարակալված պարբերությունները անհրաժեշտ է համարակալել՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջների:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	Նախագծում «Հակադոպինգային կանոններ» հաստատելու լիազորությունը պետական ոչ առևտրային կազմակերպությանը վերապահելու մասին կարգավորումը խնդրահարույց է, քանի որ Սահմանադրությամբ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն վերապահվել է միայն	Ընդունվել է	Ընդունվել է

			Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին, որպիսին պետական ոչ առևտրային կազմակերպությունները չեն հանդիսանում: Բացի այդ, հարկ է նշել, որ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով ևս պետական ոչ առևտրային կազմակերպություններին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն վերապահված չէ: **Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով առաջարկվող կարգավորումն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով Սահմանդրությամբ և Օրենքներով սահմանված վերոնշյալ դրույթներին**:		
9.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչել օրենքի 9-րդ հոդվածի ժ.7) կետը, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ մասը հանել նախագծից:	Ընդունվել է մասամբ, խմբագրվել է	Ընդունվել է մասամբ
10.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է	Ընդունվել է մասամբ,	Ընդունվել է մասամբ

		մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդված	Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ: **Օրենքի ներկայիս կարգավորումը ավելի նպատակահարմար է, հաշվի առնելով, որ ՀԱՕԿ-ը չի իրականացնում մարզիկների թեստավորում և որակավորում: Համաձայն Համաշխարհային հակադոպինգային գործակալության օրենսգրքի 20.5-րդ հոդվածի՝ ՀԱՕԿ-ը չի կարող միջամտել Հակադոպինգային գործունեության իրականացմանը:**	խմբագրվել է	
11.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է խմբագրել և ապահովել բովանդակային համապատասխանությունը: Անհրաժեշտ է համապատասխանեցնել Օրենքի 13-րդ հոդվածի մյուս կետերի շարադասությանը:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության	Առաջարկվում է «միշտ տեղեկացնելով» բառերը փոխարինել «մշտապես տեղեկացնելով» բառերով, «օգտվելու բժշկական սպասարկումից», «ստանալ բուժում» բառերը համապատասխանաբար փոխարինել «ստանալ բժշկական օգնություն և սպասարկում»	Ընդունվել է մասամբ, խմբագրվել է	Ընդունվել է մասամբ

		օրենքի նախագծի 5-րդ հոդված	բառերով, «բուժհաստատություններում» բառը փոխարինել «բժշկական կազմակերպություններում», «բժշկական դիսպանսեր» բառերը՝ «դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայություն իրականացնող հաստատություններ» բառերով, «1-ին մասի» բառերը փոխարինել «2-րդ մասի» բառերով:		
13.	ՀՀ կառավարություն	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներ	Առաջարկվում է խմբագրել՝ հստակեցնելով,թե արդյոք սահմանված պահանջները չպահպանելը (պարտավորությունները չկատարելը) առաջացնելու է որոշակի իրավական հետևանքներ՝ հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը:	Չի ընդունվել, քանի որ պահանջները և վրա հասնող հետևանքները սահմանված են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով և որպես այդպիսին վարչարարությունը իրականացվում է Համաշխարհային հակադոպինգային կազմակերպության կողմից՝ բոլոր երկրներում ներդրված միասնական համակարգի	Չի ընդունվել

				միջոցով՝ իր կողմից վերապատրաստված և արտոնագիր ունեցող դոպինգ սպաների միջոցով: Իրավական որոշակիության սկզբունքը ամեն դեպքում պահվում է, քանի որ օրենսգրքում հստակ սահմանվում է յուրաքանչյուր խախտման հետևանքով վրա հասնող պատիժը, որի մասին էլ նշում է կատարվում կարգապահական հանձնաժողովի որոշմամբ՝ դոպինգ խախտման դեպքը քննելիս:	
14.	ՀՀ կառավարություն	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի	Առաջարկվում է հանել «ներառյալ Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպության հակադոպինգային կանոններով» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է

		Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդված			
15.	ՀՀ կառավարություն	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 8-րդ հոդված	Առաջարկվում է Օրենքի նախագծում սահմանել ուժի մեջ մտնելու ողջամիտ ժամկետ:	Ընդունվել է	Ընդունվել է
16.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	Առաջարկվում է «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
17.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է «ՅՈՒՆԵՍԿՕ» հապավումն առաջին անգամ կիրառելիս նշել ամբողջական տարբերակով:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	Ազգային ժողովի	Ֆիզիկական	Առաջարկվում է հոդվածի ե) կետը շարադրել	Ընդունվել է	Ընդունվել է

	պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդված	հետևյալ խմբագրությամբ՝ «ե) տեղեկացված լինել և հետևել արգելված նյութերի և մեթոդների օգտագործման պահանջներին և հակադոպինգային կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն.»		
19.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդված	Առաջարկվում է խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հավաքական թիմի մարզիչներն ու մասնագետները պարտավոր են հետևել հակադոպինգային կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն:»	Ընդունվել է	Ընդունվել է
20.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (պ-446-29.11.2022-գկ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 7-րդ հոդված	Առաջարկվում է խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ Օրենքի 18.9-րդ հոդվածում լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Հավաքականի թիմի բժիշկները պարտավոր են հետևել հակադոպինգային կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն:»	Ընդունվել է	Ընդունվել է